ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/14, 23.04.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ

Պատվիրատու՝ Գեղակերտի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՀՀԱՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/03» *ծածկագրով* գնանշման հարցում, արեվային էներգիայով աշխատող /25.5 կվտ հզորությամբ/ սարքավորումների ձեռքբերում և տեղադրում:

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել Գեղակերտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի «Սոլար Էներջի Սիստեմ Սոլութիոնս» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Գ. ՆԵՐՍԻՍՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող ՝ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Կորյունի 8/4
հեռ: +37491250006 +37443100007
Էլ.փոստ՝ sessolutions@yahoo.com

Պատվիրատու ՝ Գեղակերտի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, Արմավիրի մարզ, Գեղակերտ համայնք, Մ.Մաշտոց 30
Հեռ: +374-93-250663

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
Գեղակերտի համայնքապետարանի կարիքների համար՝ արևային էներգիայով աշխատող /25.5 կվտ հզորությամբ/ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարված «ՀՀԱՍԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/03» ծածկագրով ԳՀ ընթացակարգ

ԲՈՂՈՔ

- **Բողոքի նախապատմությունը և փաստերը**

Գեղակերտի համայնքապետարանի կարիքների համար՝ արևային էներգիայով աշխատող /25.5 կվտ հզորությամբ/ սարքավորումների ձեռքբերման և տեղադրման նպատակով հայտարարվել է «ՀՀԱՍԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/03» ծածկագրով ԳՀ ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին 25.03.2019թ. մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն և ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ /25.03.2019թ./ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն 1,343,049 ՀՀ դրամ:

- **<u>Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.</u>**

ՄՈՒՏՔԱՅԻՆ
ՄՈՒՏՔԱՅԻՆ
ՄՈՒՏՔ N U-18251-19
«23» 04 2019

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ *հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով* ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն <<ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ>> ՓԲԸ-ում բացված իր հաշվից՝ 25.03.2019թ. /հայտը ներկայացնելու օրը/ արդեն իսկ վճարել է ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները /անդորրագիրը կցվում է/, սակայն անհասկանալի պատճառներով հարկային պարտավորությունների մարված լինելու փաստը ՀՀ ՊԵԿ-ի համակարգում երևացել է միայն 26.03.2019թ. /համապատասխան ապացույցները կցվում են/:

Մասնավորապես, ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ին ուղղված 18.04.2019թ. թիվ 8-1/13563-2019 գրությամբ ՀՀ ՊԵԿ-ը հայտնել է, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն 1 345 000 ՀՀ դրամ վճարել է 25.03.2019թ., որը միասնական հաշվին մուտքագրվել է 26.03.2019թ.:

Ստացվում է մի իրավիճակ, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը /ժամային առումով նույնիսկ հայտը ներկայացնելուց մի քանի ժամ առաջ/ կատարել է նաև հարկային պարտավորությունների մասով իր պարտականությունները, որը սակայն ՀՀ ՊԵԿ-ի համակարգի թերացման, ուշացման հետևանքով գրանցել է միայն 26.03.2019թ. այնուհետև, երբ Պատվիրատուն հարցում է կատարել ՀՀ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ստացվել է պատասխան, որ «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ն 25.03.2019թ. հայտը ներկայացնելու օրվա դրությամբ, ունի 1,343,049 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

ՀՀ հարկային օրենսգրքի 43-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ***հարկային պարտավորություն է համարվում*** որևէ տեսակի հարկի և (կամ) վճարի, ինչպես նաև Օրենսգրքի և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար հաշվարկված՝ Օրենսգրքով և (կամ) վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված տույժերի, տուգանքների, ինչպես նաև վնասի հատուցման գումարներ վճարելու՝ **հարկ վճարողի պարտավորությունը,** բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերի:

ՀՀ հարկային օրենսգրքի 45-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ **հարկային պարտավորությունը դադարում է, երբ այն կատարվում է:**

Գտնում ենք, որ նման դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող դիտարկվել «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՄՈԼՈՒԹԻՈՆՆ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմինների կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն այն պարզ պատճառով, որ 25.03.2019թ. /հայտը ներկայացնելու օրը/ Ընկերությունը արդեն իսկ վճարել է, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած պարտավորությունները: Իսկ ինչպես արդեն նշվել է, ՀՀ հարկային օրենսգրքի 43-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի համաձայն՝ հարկային պարտավորությունը դադարում է, երբ այն կատարվում է: Իսկ փաստացիորեն, արձանագրված 1,343,049 ՀՀ դրամ հարկային պարտավորությունը կատարվել է մինչև հայտը ներկայացնելու ժամկետը, ինչը նշանակում է, որ կատարման՝ վճարման պահից սկսած այն պետք է համարվեր դադարված. Մինչդեռ նշված հարկային պարտավորությունը չի համարվել դադարած միայն համակարգի աշխատանքի հետևանքով, երբ վճարումը ՀՀ ՊԵԿ-ի համակարգում երևացել է միայն հաջորդ օրը՝ 26.03.2019թ.:

Այսպիսով, մինչև հայտը ներկայացնելը վճարված և դադարած հարկային պարտավորության պայմաններում Ընկերությունը զրկվել է այդ պարտավորության առկայության հիմքով մասնակցության իրավունքից, ինչի արդյունքում խախտվել է մասնակցի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի նվազեցմանը և նրանց միջև մրցակցության խրախուսման խոչնդոտմանը:

Միևնույն ժամանակ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում նաև մեկ այլ կարևոր հանգամանքի վրա. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից այդպես էլ միտումնավոր չեն հրապարակվում գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, որի պատճառով մասնակից ընկերությունները չեն կարողանում տեղեկանալ, թե Ընթացակարգը որ փուլ է հասել, ով է հաղթող մասնակից ճանաչվել, կամ, միգուցե, անգործություն է հայտարարվել և այլն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ բնող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել Գեղակերտի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀԱՄԳՀ-ԳՀԱՊՁԲ-19/03» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Առոլիր՝ 6 թերթ:

Հարգանքով՝

«ՍՈԼԱՐ ԷՆԵՐՋԻ ՍԻՍՏԵՄ ՍՈԼՈՒԹԻՈՆՍ» ՍՊԸ-ի տնօրեն՝

23.04.2019թ.